«ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» (PURE-WATER) ԾՐԱԳԻՐ

“ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌՑԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՁԵՌՆԱՐԿ” ԴԱՍԸՆԹԱՑԱՅԻՆ ՄՈԴՈՒԼ

Մասնակցի ուղեցույց

Երևան
15 օգոստոսի 2019

Ծրագրի անվանումը ՝ Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում
Ֆինանսավորող՝ Ամերիկայի միացյալ նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ)
Ծրագրի իրականացնող՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ, «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ, ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոն

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները/կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Բովանդակություն

Նախաբան 5
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ 6
ՈՒսուցման հիմնական սկզբունքները 7

Նախաբան

Սույն դասընթացի մոդուլը մշակվել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի» հասարակական կազմակերպության կողմից /առաջատար կողմ/՝ «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ի և Երևանի պետական համալսարանի «Էկոլոգիական իրավունքի» գիտաուսումնական կենտրոնի հետ համատեղ իրականացվող և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող ***«Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրի*** շրջանակներում: Ծրագրի նպատակն է խթանել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու օգտագործումը՝ հանրային մասնակցության և իրազեկման միջոցով, ինչպես նաև խթանել վարքագծի փոփոխությունները՝ ստորգետնյա ջրերի արդյունահանման կրճատումն ապահովելու համար: Այդ նպատակով Ծրագրի շրջանակներում ընտրվել են թիրախային 12 սակավաջուր համայնք՝ 6-ական Արարատի և Արմավիրի մարզերից:

Այդ դասընթացը նախատեսված է ծրագրի շրջանակներում ընտրված 12 թիրախային տեղական ինքնակառավարման համայնքներում ջրային ռեսուրսների կարևորության, կառավարման և պահպանության սկզբունքների ուսուցանման համար:

«Մասնակցի ուղեցույցում» դասընթացով նախատեսված գործողությունների բովանդակությունն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով օգտագործվել են պայմանական նշաններ, որոնց բովանդակային նկարագիրը բերված է ստորև:

Դասընթացը նախատեսված է 18 տարեկանից բարձր տարիք ունեցող մասնակցի համար:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Նպատակներ/խնդիրներ.	Այս նշանին կից տրված է խնդրի գրավոր բացատրությունը: Բոլոր ծրագրերն ու գործընթացները նպատակ ունեն հասնել վերջնական նպատակին/խնդրին:
Ժամանակ.	Էջի վերևում հայտնվում է ժամացույց և ցույց է տալիս ամբողջ դասընթացի ժամանակը. ընթացքում նույնպես հայտնվում են ժամացույցներ՝ կոնկրետ ժամանակահատվածներ նշանակելու համար:
Նախապատրաստական աշխատանք.	Ցույց է տալիս, որ աշխատանքը պետք է կատարվի բուն դասընթացից առաջ, որպեսզի ապահովի ինչպես կազմակերպված գործընթացները, այնպես էլ մեկից մյուսը կատարվող անցումները:
Բաժանվող նյութ.	Այս նշանը և դրան կից համարը ցույց են տալիս, որ մասնակիցները ստանում են հատուկ համարակալված թղթեր: Բաժանվող նյութերը պետք է նախապես պատրաստվեն:
Պրոյեկտոր և PP սլայդերի կիրառում.	Տեսողական պատկերները կարող են ուղեկցվել բանավոր բացատրություններով և պետք է նախօրոք պատրաստվեն: Սենյակը նախապատրաստելիս պետք է նաև հաշվի առնել տեխնիկան:
Տեսական մաս.	Բաց գրքի նշանը ցույց է տալիս հատուկ մեթոդական մոտեցում, որից հետո պլանավորվել է այդ դասընթացը:
Հարցեր մասնակիցների համար.	Այս նշանը ցույց է տալիս հարցեր, որոնք վարողը առաջարկում է մասնակիցներին:
Պատասխանի օրինակներ.	Նախապես հավաքվում են հնարավոր պատասխաններ առաջարկվող հարցերի համար՝ քննարկումը նախապես պլանավորելու համար:
/ Հարց ու պատասխանի բաժին.	Այստեղ կարող է տեղի ունենալ քննարկում՝ կոնկրետ թեմայի վերաբերյալ: Նախապես մշակվում են հարցերն ու պատասխանները:
Անհատական վարժություն/առաջադրանք.	Նպատակներին հասնելու համար մասնակիցներին հանձնարարվում է լրացնել վարժություն/առաջադրանք: Այս նշանին կցվում է հաջորդ 4 նշաններից մեկը՝ ավելի հստակեցնելով առաջադրանքի կատարումը և տալով քայլ առ քայլ ցուցումներ:
-Փոքր խմբային աշխատանք.	Նպատակներին հասնելու համար մասնակիցներին կարող է հանձնարարվել լրացնել վարժություն/առաջադրանք փոքր խմբերով: Փոքր խմբերը ամենաարդյունավետն են մասնակիցների համար, քանի որ զարգացնում են խորքային աշխատանք և երկարաժամկետ ծրագրեր իրականացնելու հմտություններ:
+ Մեծ խմբով քննարկում.	Նպատակներին հասնելու համար մասնակիցներին կարող է հանձնարարվել աշխատել մեծ խմբով: Մեծ խմբով քննարկումները վերաբերում են կոնկրետ թեմաների, որտեղ մյուս մասնակիցների փորձը օգտակար է օգտագործել՝ որպես ցուցումներ:
Աշխատանք զույգերով.	Նպատակներին հասնելու համար մասնակիցներին կարող է հանձնարարվել

	կատարել առաջադրանք/վարժություն զույգերով: Երկու անդամները կարողանում են շփվել և հավասար պատասխանատվություն են կրում, բացի այդ, զույգերը ավելի արագ են կատարում առաջադրանքները:
Թիմային աշխատանքի ներկայացում.	Երբ ավարտվում է վարժությունը/առա- ջադրանքը, մասնակից խմբերը ներկայացնում են իրենց եզրակացությունները, որպեսզի կիսվեն իրենց փորձով, ստանան բազմազան տեղեկություններ և հետևեն նորարարություններին:

Ուսուցման հիմնական սկզբունքները

Մինչև սույն ուսուցումը սկսելը կարևոր է հասկանալ, որ ցանկացած տեսակի ուսուցման համար առկա են որոշ կարևոր սկզբունքներ: Այդ սկզբունքներին հետևելով՝ հնարավոր կլինի սովորել ավելին և դրանք, իր հերթին, կաջակցեն նյութի արդյունավետ փոխանցմանը:

Առաջին սկզբունքը՝ **ուսուցումը գործընթաց է:** Սովորաբար այն հիմնվում է տեսական և գործնական մասերից: Տեսական մասի իմանալը խիստ կարևոր է գործնական մասին և, ընդհանրապես, ողջ ուսուցման գործընթացին տիրապետելու համար: Այստեղից հետևում է, որ ուսուցումն իրենից ներկայացնում է դինամիկ և անընդհատ զարգացող գործընթաց: Այն չի սահմանափակվում միայն ներկա դասընթացով կամ որևէ նյութի ընթերցմամբ: Այն իր մեջ ներառում է ստացվող նյութի յուրացում, դրա հետագա կիրառելիությունն իր առօրյայում՝ աշխատանքային և ընտանեկան միջավայրերում, ուսուցման ոլորտին առնչվող գիտելիքների հետագա թարմացում: Այն պահից, որ մենք ընդունում ենք, որ ուսուցումն իրենից ներկայացնում է գործընթաց, ցանկացած ուսուցանված նյութ հնարավոր է լինում յուրացնել և հաջողությամբ կիրառել հետագայում տարբեր իրավիճակների առաջացման ժամանակ:

Երկրորդ սկզբունքն այն է, որ **յուրաքանչյուր մարդ սովորում և նյութն ընկալում է տարբեր եղանակներով և ձևերով:** Դա նշանակում է, որ դասընթացների մասնակիցները նյութն ընկալում են տարբեր ձևով, ոճով կամ արագությամբ: Այդ պարագայում դասավարը պետք է պարբերաբար հարցնի լսարանին, արդյոք հասկանալի է դասավանդվող նյութն ու խաչաձև հարցերով իր համար ճշտի, արդյոք այն ճիշտ են ընկալում դասընթացի մասնակիցները: Դասընթացի մասնակիցներն էլ, իր հերթին, պետք է չխուսափեն հարցեր տալուց, քանի որ ամեն ինչ չէ, որ կարող է բոլորի համար հասկանալի լինի:

Երրորդ սկզբունքը՝ **ուսուցումը բարելավվում է, երբ այն նպատակաուղղված է կոնկրետ նպատակների:** Համաձայն ուսումնասիրությունների, երբ ուսումը զուգակցվում է հստակ նպատակների հետ, այն ընթանում է ավելի հեշտ և արագ: Օրինակ, երբ մարդիկ սովորում են մեքենա վարել, որպեսզի հետագայում հասնեն աշխատանքի վայր, նրանց մոտ այդ գործընթացն ավելի արագ է ստացվում: Այդ իսկ պատճառով պետք է շարունակաբար կենտրոնանալ դասընթացների հստակ նպատակների վրա և կապ հաստատել, թե ինչու է կարևոր տիրապետել այդ գիտելիքներին:

Չորրորդ սկզբունքը՝ **ակտիվ մասնակցությունը բարելավում է ուսումնառության գործընթացը:** Համաձայն ուսումնասիրությունների՝ ակտիվ մասնակցությունը դասընթացներին բարելավում է ուսուցման գործընթացը և ապահովում է տեղեկատվության հեշտ յուրացումն ու

հետագայում հիշելը: Խրախուսվում է մասնակիցների ակտիվ ներգրավվումը քննարկումների մեջ, որպեսզի նրանք արտահայտեն իրենց կարծիքները:

	Մասնակիցներից նախնական գիտելիքների ճշտում
	5-10 րոպե
	Դասաժամ 1. ՁԹ ստանալու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերը
	1-ին դասաժամին Դուք կիմանաք. Ի՞նչ է իրենից ներկայացնում ջրօգտագործումն ու ՁԹ-ն: Ո՞ր դեպքերում է պետք ստանալ ՁԹ: Ե՞րբ է պետք կատարել ՁԹ-ների երկարաձգում կամ վերաձևակերպում:
/	Առաջին դասաժամից հետո մասնակիցները կկարողանան պատասխանել հետևյալ հարցերին.
/	Կա՞, արդյոք Ձեր շրջապատում ջրօգտագործում իրականացնող անձ: _____ _____ _____ _____ Արդյոք, բոլոր ջրօգտագործման դեպքերում է պետք ստանալ ՁԹ: _____ _____ _____ _____

@	Բոլո՞ր ջրօգտագործման դեպքերում է պետք իրականացնել ՁԹ-ի վերաձևակերպում կամ երկարաձգում: ————————————

? / @	ներկայացվող փաստաթղթերի ցանկ: ————————————

	Երրորդ դասաժամից հետո մասնակիցները կկարողանան պատասխանել հետևյալ հարցերին.
	Ինչպես օգտվել առցանց հարթակից: ____ ____ ____ _____ Ինչպես հետևել ներկայացված հայտի ճանապարհին: ____ ____ ____ _____
	ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ
	30-35 րոպե
	Առաջադրանք՝ աշխատանք համակարգիչների առաջ Բաժանվել զույգերի կամ փոքր խմբերի /մինչև 3 հոգի/ և համակարգիչների մոտ՝ Յուրաքանչյուրն իր մասով գրանցվի ՁԹ-ների հայտերի ընդունման առցանց հարթակում, ընտրի անհրաժեշտ նպատակով ՁԹ-ն ու ներբեռնելով անհրաժեշտ փաստաթղթեր փորձել ձևավորել հայտ:
	20-25 րոպե
	Մասնակիցների կողմից դասընթացի կարևորության գնահատում
	5-10 րոպե
	Թիմային աշխատանքի ներկայացում
	20-30 րոպե

	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ **170-210 րոպե**